ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության մինիստրների խորհրդի միջև Ռուսաստանի նավթային և գազային արդյունաբերության զարգացման գործում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարության մինիստրների խորհուրդը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով, որ վառելիքաէներգետիկ համալիրները փոխկապակցված են և հանդիսանում են Կողմերի տնտեսության զարգացման հիմքը,

ղեկավարվելով նավթային և գազային արդյունաբերության հետագա զարգացման անհրաժեշտությամբ,

հաշվի առնելով Կողմերի փոխադարձ շահագրգռվածությունը հումքային բազայի արդյունավետ օգտագործման հարցում, ինչպես նաև այդ բնագավառներում ներդրումային, գիտատեխնիկական և համագործակցության այլ ձևերի հարցում,

ելնելով Եվրոպական էներգետիկ Խարտիայի սկզբունքներից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, փոխշահավետության, փոխօգնության և միմյանց տնտեսական վնաս հասցնող գործողություններ չթույլատրելու հիմունքներով, համակողմանիորեն կզարգացնեն համագործակցությունը նավթային և գազային արդյունաբերության մեջ:

Հոդված 2

Կողմերը միջոցներ կձեռնարկեն նավթային և գազային արդյունաբերության համար սարքավորումների, նյութերի, կոմպլեկտավորման իրերի և այլ արտադրանքի՝ ճյուղային և միջճյուղային ձևավորված կապերի պահպանման, դրանց հետագա զարգացման և կատարելագործման ուղղությամբ:

Հոդված 3

Կողմերն անհրաժեշտ աջակցություն կցուցաբերեն նավթային և գազային արդյունաբերության համար միավորումների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից սարքավորումներ, նյութեր, կոմպլեկտավորման իրեր և այլ արտադրանք մատակարարվելու պայմանագրերի կնքմանը և կատարմանը: Ընդ որում առանձնացված քվոտաների սահմաններում արտադրանքի կարևորագույն տեսակների մատակարարումների ծավալները սահմանվում են ամեն տարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշված նախարարության (գերատեսչության) և Ռուսաստանի Դաշնության վառելիքի և էներգետիկայի նախարարության միջև՝ առանձին արձանագրությամբ:

Հոդված 4

Կողմերը միջոցներ կձեռնարկեն երկկողմ ծրագրերի կատարումը և միջպետական բազմակողմ ծրագրերի համակարգումը նավթային և գազային արդյունաբերության մեջ գիտատեխնիկական և փորձարարակոնստրուկտորական մշակումները ապահովելու, նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրումը կազմակերպելու ուղղությամբ՝ արդյունավետորեն օգտագործելով Կողմերի գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորային կազմակերպությունների ձևավորված կառուցվածքը և մասնագիտացումը:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն նավթային և գազային արդյունաբերության մեջ միասնական համաձայնեցված նորմատիվ և տեխնիկական քաղաքականություն վարելուն, գործող ստանդարտների և տեխնիկական պայմանների միասնականացմանը՝ ապահովելով այդ բնագավառներում օբյեկտների շինարարության, դրանց շահագործման, տեխնոլոգիական կառավարման և անվտանգության նորմերի ու կանոնների միասնականությունը:

Հոդված 6

Կողմերը միջոցներ կձեռնարկեն նավթային և գազային արդյունաբերության մեջ պետական բնապահպանական ծրագրերի մշակման և իրագործման ուղղությամբ՝ միասնական մեթոդոլոգիական մոտեցման հիման վրա:

Հոդված 7

Կողմերի տնտեսավարող սուբյեկտների համատեղ գործունեության շրջանները և նավթի ու գազի հանքավայրերի հետախուզման, սարքավորման և մշակման, ճանապարհների, բնակարանների և սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության աշխատանքների ծավալները կորոշվեն ամեն տարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշված նախարարության (գերատեսչության) և Ռուսաստանի Դաշնության վառելիքի և էներգետիկայի նախարարության միջև՝ առանձին արձանագրությամբ՝ տեղական մարմինների հետ սահմանված կարգով համաձայնեցնելով և Ռուսաստանի Դաշնության կառավարության հավանությանն արժանանալուց հետո:

Հոդված 8

Կողմերը կնպաստեն նոր նավթային և գազային հանքավայրերի հետախուզման, սարքավորման և շահագործման, չօգտագործվող հանքահորերի վերանորոգման և շահագործման մեջ դնելու գծով համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, նավթի արդյունահանման երկրորդական մեթոդների կիրառման ընդլայնմանը, նավթ և գազ արդյունահանող շրջաններում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը:

Հոդված 9

Կողմերը կապահովեն սույն Համաձայնագրի կատարմանը մասնակցող տնտեսավարող սուբյեկտներին պատկանող և նրա նպատակների համար օգտագործվող տեխնոլոգիական և տեխնիկական միջոցների, նյութերի և մեխանիզմների անարգել ու անմաքս ներկրումը և արտահանումը:

Հոդված 10

Սույն Համաձայնագրին համապատասխան կատարված աշխատանքների համար փոխհաշվարկները կիրականացվեն Կողմերի կողմից՝ տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերով (կոնտրակտներով) նախատեսված պայմաններով:

Հոդված 11

Կողմերը կապահովեն Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և երաշխիքների պաշտպանությունը:

Հոդված 12

Կողմերը փոխադարձ օգնություն կցուցաբերեն նավթային և գազային արդյունաբերության օբյեկտներում տարերային աղետների և վթարների հետևանքները վերացնելիս, այդպիսի օբյեկտների գործունեության հուսալիությունը և կայունությունը բարձրացնելու ուղղությամբ առանձին համատեղ աշխատանքները ֆինանսավորելիս:

Հոդված 13

Կողմերը պատշաճ միջոցներ կձեռնարկեն իրենց տարածքներով անցնող նավթի և գազի գլխավոր խողովակաշարերի կայուն աշխատանքի ապահովման ուղղությամբ և կիրականացնեն իրենց տարածքներով նավթի, գազի և նավթամթերքների անարգել տարանցումը:

Հոդված 14

Կողմերը մտադիր են սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ ծագող բոլոր հարցերը լուծել բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 15

Կողմերը պայմանավորվեցին, որ սույն Համաձայնագրի պայմանների միակողմանի փոփոխություն չի թույլատրվում: Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները գործում են միայն դրանք գրավոր ձևակերպելու և Կողմերի լիազորված մարմինների կողմից ստորագրվելու պայմանով:

Կողմերը հաստատում են, որ Կողմերի տնտեսավարող սուբյեկտների միջև սույն Համաձայնագրի կատարմանն ուղղված պայմանագրեր կնքելիս և իրագործելիս ծագող վեճերը քննվում են

սահմանված կարգով՝ դատարանների, արբիտրաժային (տնտեսական) կամ միջնորդ դատարանների կողմից:

Հոդված 16

Կողմերը պարտավորվում են կազմակերպել սույն Համաձայնագրի կատարման ընթացքի մասին տեղեկության օպերատիվ փոխանակում:

Հոդված 17

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և ուժի մեջ է մնում մինչև մեկ տարին լրանալը այն օրվանից, երբ Կողմերից մեկը գրավոր կծանուցի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Սուրգութ քաղաքում 1993 թվականի մարտի 2-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մարտի 2-ից: